# Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>>

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

<<ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՀՈԴՎԱԾ 1.** <<Այլընտրանքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-6-Ն օրենքի (այսուհետ` Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասում <<, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանված ժամկետներում>> բառերը փոխարինել <<` օրենքով սահմանված կարգով>> բառերով:

**ՀՈԴՎԱԾ 2.** Օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասում <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պարզում է>> բառերը փոխարինել <<պարզում է օրենքով սահմանված կարգով>> բառերով:

**ՀՈԴՎԱԾ 3.** Օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 17-րդ հոդվածի 6-րդ մասերում <<օրենքով>> բառից առաջ լրացնել <<պարտադիր ժամկետային զինծառայողների համար>> բառերը:

**ՀՈԴՎԱԾ 4.** Օրենքի 20-րդ հոդվածում.

1) 1-ին մասում <<Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով>> բառերը փոխարինել <<պարտադիր ժամկետային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար օրենքով սահմանված կարգով>> բառերով.

2) 2-րդ մասում լրացնել նոր նախադասություն` հետևյալ բովանդակությամբ.

<<Այլընտրանքային աշխատանքային ծառայողների և նրանց ընտանիքների անդամների բժշկական օգնության և սպասարկման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:>>:

**ՀՈԴՎԱԾ 5.** ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն օրենքը, բացառությամբ 1-ին հոդվածի, ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 133-րդ հոդվածն ուժի մեջ մտնելու օրվանից: